

ՊԱՅՄԱՆՔ
ՊՈՒԼԿԱՐԻԱ

Տարեկան . . . 12 Ֆր.

Վեցամսեայ . . . 6 Ֆր.

ԱՐՏԱՍՈՒՄԱՆ

Երկու քիւնկի ծրարով
Տարեկան . . . 14 Ֆր.


Վեցամսեայ . . . 7 Ֆր.

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60
Վեցամսեայ 1.50 Տոյար

Կ Ա Ն Խ Ի Կ

Մանուցման տողը
20 սանթիմ



Լ Ր Ա Ք Ի Ր

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ՀԱՍՑԷ

Publication du journal

fr vounk

Rev. Pere G. Kalemkarian, Missionnaire
tengasco No 4

Vienne (Autriche)

Редакция

НАБВСТНИКЪ

Ирвунк

ВАРНА

Գրութորներ եւ չեմ
տրուիր

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԲԻԷՌ ՍԹՈՒՈՒՎԻ ՃԱՌԸ

(Շար. նախորդ թիւէն)

Քաղաքացիներ, գիտէ՞ք թէ Ս. Սինոդը, իր մէկ նոր չրջաբերական նիստէն, սահմանադրական շարժումը կը վերագրէ նաեւ զուրաքէն եւ կամ գրգռումներու : Ս. Սինոդը այս առաջին անգամը չէ որ իր պաշտօնական գործողութեանց մէջ կը ստէ : Մենք կրնանք հոս յիշել այս մասին հետաքրքրական նախնական մը որ կապ ունի ֆրանսիոյ յարաբերութեան պատմութեան հետ : 1806 ին Աղէքսանտր Ս. Բրուսիոյ թագաւորը պաշտպանեց Նաբոլեոնի դէմ : Այդ միջոցին Ս. Սինոդը հրատարակեց հանդիսաւոր յայտարարութիւն մը, որով կամբաստանէր Ֆրանսացիացի կայսրը իբր կոռուպտիւթիւն հաստատող, իսլամականութիւնը պաշտպանող, անբողոք տիեզերքին մէջ ցրուած Հրեաներու միացումին ձգտող եւ Սանհեթրինը (Հէթից բարձրագոյն ժողով) վերահաստատող եւ ինքզինք Մէսիա հռչակելու զգող : Ս. Սինոդի այս պաշտօնագիրը նոյն իսկ հիւնդաթուաւ ժողովրդական առասպելի մը թէ պապէն թագադրուող Նաբոլեոն առաջինը միայն խաւարածիտ հակաքրիստոնեայ մը պիտի ըլլայ : Ըստ թիւսի թիւի գաղափարին Ս. Սինոդը հարկաւորուեցաւ հերքել իր այլանդակ սուտերը :

Քաղաքացիներ, դուք կամրաստանութեան հակառուս ընկերութիւններ կազմակերպելու եւ Ֆրանսացի ու Ռուս ժողովուրդներուն դաշնակցութիւնը խզել ջանալու մէջ : Տարբերակ ամբաստանութիւն : Ես Ռուս մը ըլլալով սա համոզման հասած եմ հոս թէ այս միութիւնը Ռուսիոյ համար համակրանք գեղուն է : Թէ իր նպատակն է ամբապնդել երկու մեծ ազգերու միջեւ բարեկամութեան կապերը : Վրաստան եւ թէ այս իմ բուռն չարտի հերքէք : Միայն մէկ վտանգ կայ որ կոպտոյն երկու ազգերու բարեկամութեանը, այս վտանգը ինքնակալութիւնն է, իր պահպանումը, իր արտաքին յիմար ձեռնարկութիւններու քաղաքականութիւնը, եւ ներքին վարչական եղանակը :

Ներքեք որ Ձեզ մասնաճիւղ ընեմ խիստ իրական վտանգ մը : Յետադիմականներուն մէջ, ինքնակալութեան նեղուկները—եւ պատճառին ծանօթ ըլլալով կրնամ դայ

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՄԱԿԵՊՈՆԻԱ

Փետր. 12 ին (Ն. Տ.) Ուէսթմի-նիսթրի սրահին մէջ համախորհուած ժողովը՝ որ Լօրտ Սթան-մօնէի նախագահութեամբ եւ բաղ-մաթիւ երեսփոխաններու մաս-նակցութեամբ տեղի ունեցած էր, բառ առ բառ հետեւեալ որոշումը տուած է միաձայնու-թեամբ, ըստ առաջարկութեան Տ. Հէնդլէթ Կլաւսթոնի :

Ներկայ ժողովը՝ նկատելով որ Հայաստանի եւ Մակեդոնիոյ մէջ օսմանեան վարչութեան չարա-գործութիւնները ամօթ կը բե-րեն քաղաքակրթեալ եւրոպային, կը հաստատէ որ Անգլիոյ եւ ու-րիշ պետութեանց պարտակա-նութիւնն է կարգապահութիւնը վերահաստատել այդ երկիրնե-րուն մէջ :

Այս ժողովէն առաջ, յունվար 11 ին Անգլիական Պալատեան Գոմիթէի կողմէ պետութեանց մատուցուած յիշատակագրով մը նոյն յանձնախմբի անդամները Անգլիոյ եւ Ֆրանսայի արտաքին գործոց նախարարներուն, յայ-տարարած էին թէ ինչպէս յա-կեղոնիոյ նոյնպէս ալ Հայաստա-նի վիճակը կը պահանջէ ազդու միջոցներ ձեռք առնել : Թէ Անգլիոյ եւ թէ Ֆրանսայի մէջ սրտի եւ զգացումի տէր նշանա-ւոր անձնաւորութիւններ սա հա-մոզման եկած հասած են թէ Հա-յաստանի եւ Մակեդոնիոյ հար-ցերը իրարու կապակից են եւ մին կարգադրելու միւսը լքա-նել անարդար եւ աննպատակ է :

Ահա այս համոզման հետեւ-ւանքն է Փետր. 12 ի նշա-նաւոր ժողովին վերի որո-շումը : Յանուն բաղմաթիւ անգ-լիական քաղաքացիներու եղած դիմումին՝ նախարար Լօրտ Լա-նստօնի պատասխանը ցոյց կուտայ թէ իրեն յայտնուած կարծիքը նկատողութեան առ-նետ տրամադիր է : Արդէն թագաւորի գահաճառն ալ թուր-քիոյ բարենորոգմանց խնդրոյ մասին անգլիական կառավարու-թեան միւս շահագրգռող պե-տութեանց հետ բանակցութեան մէջ գտնուելը յայտնեց հանգի-գիսաւորապէս :

Այս բոլորը կուգան հաս-տատել թէ Հայաստանի խնդի-րը Մակեդոնականին հետ այ-սօր կանաչ սեղաններու վրայ կը գտնուի : Եւ ուրախաւիթ է տեսնել թէ Անգլիոյ եւ Ֆրան-սայի ներքին կուսակցութիւն-ները, թէ՛ ազատական եւ թէ պահպանողական, տարբեր կար-ծիքներ չունին Հայաստանի բա-րենորոգմանց խնդրոյն տե-սակէտով : ամէն ալ կը բաղ-ձան որ իրենց կառավարու-թիւնները ազդու միջոցներ ձեռք առնեն մերձակայ Արե-ւելքի անգործութիւնը վրդո-վող եւ եւրոպայի պատիւը արա-տաւորող թրքական վայրագու-թեանց վերջ մը դնելու հա-մար :

Մինչ մէկ կողմէն եւրոպա-յի մայրաքաղաքներուն մէջ խզ-ճի եւ զգացումի տէր կարե-ւոր անձնաւորութիւններ իրենց բողոքներովը ու դիմումներովը նախարարներու ընդհան-րէն համակրական խօսքեր ու կէս խոստումներ խլել կը յա-ջողին, միւս կողմէ նոյն նա-խարարները իրենց գեապանե-րուն միջոցաւ սակարկութեան մէջ կը գտնուին թուրք կա-ռավարութեան հետ նիւթական նպատաւոր պայմաններ կնքե-լու եւ առանձնաշնորհումներ ձեռք բերելու իրենց սեփա-

կան երկրին կամ կառավարու-թեան ի նպաստ : Եւ երբ Սուլ-թանի կառավարութիւնը իր տեսակէտով, չարեաց փոքրա-գոյնը ընտրելով, գեապաններու նիւթական պահանջներուն չա-փով մը գոհացում տայ, ա'լ վայր-կենապէս կը դադրի բարե-նորոգմանց խնդրոյն յուզումը : Թագաւոր, նախարար եւ գեա-պան եղ ու մեզր կըլլան Սուլ-թանին եւ իր կառավարութեան հետ, ու շքանշաններ կը փո-խանակուին երկուստէք, եւ Հայը ու Մակեդոնիացին կը մոռցուին նոյն իսկ մարդասէր մամուլէն որ դէռ երէկ շանթ ու կայ-ծակ կը տեղացնէր Սուլթանի գլխուն : Այս ողբերգական տե-սարանները գրեթէ ամէն տա-րի կը կրկնուին մանաւանդ հայ-կական խնդրոյ մասին, որ պե-տութեանց ձեռք չհաբեր զէնք մըն է եղած Սուլթանը վախցը-նելով անկէ իրենց համար բան մը կորզելու ծառայող :

Տասնեակ տարիներէ ի վեր եւրոպական դիւանագիտութեան մեր հրաժ գառն յուսախաբու-թիւնները այնչափ շատ եղած են որ, ներկայ պարագաներու տակ ալ փորձառական կասկած-ներ ունինք թէ, Անգլիոյ եւ Ֆը-րանսայի մէջ վերսկսող հայա-նպաստ շարժումները մի գուցէ վաղը այն վախճանը ունենան, որ Անգլիան Արաբիոյ կողմերը իր պահանջներուն գոհացում ստանայ եւ Ֆրանսան այ թնդա-նութիւններու ապսպրանքը առնէ եւ բարենորոգմանց խնդիրը ժամա-նակի մը համար կրկին դուրս, մինչեւ որ այդ մարդասէր պե-տութիւններու ախորժակը նո-րէն բացուի նոր եւրոպայա-տառներ խլելու համար թուր-քէն : Եթէ այս անգամ ալ այդ վերջաւորութիւնը պիտի ունե-նայ մարդասէր անգլիացիներուն ու ֆրանսացիներուն նոր չար-ժուժը, լաւ է որ չը շարժին ու աղբալէտով թուրքին վրէժխնդ-րութիւնը չաւելցնեն հայ ժո-ղովուրդի գլխուն :

մասին խոսել — մտքերը եր չորոնք
եւ ատելութիւն կը սերմանն իմ
հայրենիքի մէջ անպիտան գէտ եւ
բացարձակ կեդրոյ կը ջանան ինք-
նայ հետ պատերազմի բռնուելու :
Դիպրիմայի կողմէն ինքնայ գէտ
իրենց կը տն մէջ կոյր եւ սպառ-
անելութեան ներքինի մը կը ինքն
Սնդիկոյ նկատմամբ : Այս վտանգը
մասնանշելով , չէ որ աշխարհու-
թիւն կընեն սա վերջի գիւտնա-
գիտական այն միջադէպին զոր ,
ինչպէս այդ անասկէն գիւտնա-
գիտին է հարգուի : Ետոյ որ
ժողովուրդ է կոտորի ազգային առե-
ւելութեան գէտ : Գտնուք արծարե-
ղէպի արկած գիւտ կը նշանակէ
եւ այս արկածը պիտի շարունակէ
մեզ սպառնալ , ցորչափ ինքնակա-
լութիւնը անգի շտապ ազատութեան
եւ ժողովուրդին իշխանութեանը :
Եթէ յետագիւտական ուժը
այսինքն վրայ կը հանգչի Չարիզմը ,
յառաջ բերեն պատերազմը ինչպիսի
եւ Ռուսիոյ միջեւ : Ինչ որ կը
ցանկան մաս քր յաղտապէսներ
նոյնպէս Թրանսայի մէջ ալ — ասով
դաշնակցութիւնը պիտի շարունակուի
պիտի խզուի անոց միջոցաւ ան-
շուշտ , որոնք այսօր Չարիզմին
հանդէպ ըլլալու համար կը հրաւի-
րեն Թրանսայ — Մեծ յեղափոխութեան
միջանակ — երես գործնելու ուս-
տական շարժումի մակընթացութե-
ան :

Եւ թոյլ տուէք ինձ ըսելու ,
քաղաքացիներ , թէ ինչ պիտի
պատահի եթէ բուն սկսուի ինչ որ
Չարիզմը եւ ուրիշին ծրագիրները գը-
լուին հանդիս մէջ : Այն ատեն մենք
պիտի տեսնենք Թրանսայի մեծ
ու փոքր խնայողութեան միջոցաւ
ներքեւ օրը ցըգած : Իրենց շահերու
հոգաւոր բոլոր Թրանսայից կրկ-
նելէ պէտք քէ յոգնիլ : Ռուսի-
անցաւ մի կարծէք , այլ կասկա-
ծեցէք , կասկածեցէք ձերական բռնա-
պետութեան : Սա ամենապէշ անաս-
կէն արկածախնդիր մըն է : Օգնե-
նեցէք մեզ դայն ջանքերով եւ հա-
մար : Մենք ձեզմէ ուրիշ բան
չենք ուզիր , այլ միայն հիւրըն-
կայութիւն եւ բարոյական պաշտ-
պանութիւն ձեր ազգային աւան-
դութեանց եւ ձեր յեղափոխական
փառաւոր անցեալին հակապատաս-
խան :

Բիւթ ՍԹՈՒՈՒՎ

Ի ՍԼԱՍԻՈՒԹԻՆԵՐ ԵՒ ԻՍԼԱՄՆԵՐԸ

Դուրանէն զատ զուր , մահմէ-
տական տաճիկները , ձեր շէրե-
թի գէտ ալ կը մեղանշէք հազարա-
որ հայեր կոտորելով : Զեր մար-
գարէն ըսեր է , «էլ ինքանու պիւն-
եան — ուր — քարքի մէլուսուն մէն
հէտէմէ պիւնեան — էր — բարք » :
այսինքն մարդս Սատուոյ շինուածքն
է : անիծալ է ուլ որ քսկեց
կատուած շինուածք » : Ահա ձեր
կրօնքն է , որ ձեզ կանխէ :
Զեր օրէնքը հետեւեալ սահ-
մանն է զրէր պատերազմի նկատ-
մամբ :
« Երբոր մենք զանոնք պա-
շարեր ենք , կը հրաւիրենք զա-
նոնք իսլամական կրօնքն ընդունե-
լու : Եթէ իսլամացան , ապէկ »
որովհետեւ ձեր մարգարէն ըսեր է ,
« Ինձի հրամայուած է որ մարգ-

արդ ձեա պատերազմի մինչեւ որ
ըսեն «լա իլահա իլլ» ալլահ , այ-
սինքն Սլահէն զատ Սատուած չը-
կայ : » Եթէ եթէ իսլամը չեն
ընդունիր , զանոնք կը հրաւիրենք
ճիշդ — զիստական միջոցով , եթէ
յարմար են » : այսինքն եթէ Սուրը
Գիւրք ընդունեն կամ Պարսիկ կամ
ուրիշ կապաշտներ են , եւ ոչ թէ
արապներ կամ իսլամադիններ :
այս վերջի երկու տեսակները կամ
պիտի իսլամանան կամ սպաննու-
ին : « Զիշէն ընդունողներուն պէտք
է յայանենք , թէ ո՞րքան պարտ
են վճարելու եւ ե՞րբ եթէ ա-
ստուք ճիշդ վճարեն ըրդէն ,
այն ատեն ինչ իրաւունքներ որ
մենք ունինք , անոնք ալ նոյն
իրաւունքներն ունին , եւ ինչ
պարտականութիւններ որ մենք ու-
նինք , նոյնն ալ անոնք ունին :
Զեր շէրեթին այս կէտն ամենկ
պարզած է , թէ ձեր հպատակ
քրիստոնեաները եւ միւս գիւտ-
նալ վճարող ազգերը պարտական
չեն ձեզ հետ ձեր կրօնական պաշ-
տամուսնները կատարելու , այլ ինչ-
պէս ձեր մարգարէի փեսան Սլին
անկէ լսելով ըսեր է «անոնք որ
գլխահարկը կը վճարեն , անոնք ա-
րիւնը նման է մեր արիւնին եւ
անոնք ստացուածքը նման է մեր
ստացուածքին » :

Ո՛վ Շէյխ — Իսլամ եւ ո՛վ իս-
լամական խօսակեր , դուք որ ձեր
այդ օրէնքը մանրամասնօրէն զետե-
ք եւ գիտէք թէ հայուն արիւնը
նոյն արիւնն աւել եւ նոյն պաշտ-
պանելու իրաւունքն ունի որչափ
մահմէտական տաճիկի արիւնը , եւ
հայուն ստացուածքն ալ նոյնչափ
պատհով ըլլալու է , որչափ ձեր
տաճիկներու ստացուածքը , հապա-
կնչու ձեր կրօնքը անտես ինչէք
ու հայուն արիւնը կը թափէք եւ
ստացուածքը կը յափշտակէք : Դուք
ձեր կրօնքին գէտ չարաչար կը
մեղանշէք : Դուք գիտէք նաեւ
եթէ քրիստոնեան մէկ տարի իր
գլխահարկը չը վճարէ , երկրորդ
տարին անկէ ալ չհարկը պահան-
ջիւն իրաւունքը չունիք , զիսա-
հարկը երեք ատիժանի բաժնուած
էր , Զր մեծ իսլամի Օմարը
որոշեր է այդ ատիժանները քս-
կովմը պարտաւոր է այդ կանո-
նան պահելու : հարուստ քրիստոնե-
ան , հրէան , Մէճուսին (Մոզը)
կամ անէմին պէտք է վճարէ
48 տիքն մօտ 20 արծաթ մէ-
ճիւրիլ , միջին կարողութեան տէ-
րն ալ ատր կէսը , իսկ հասարակ
մարդիկ քառորդը : Աղքատները
գլխահարկ վճարելու պարտական
չեն : Սա ձեր օրէնքն է : Բաց ի
դմանէ ձեր շէրեթը մինչեւ անգամ
այսպիսի մի օրէնք գրած է , որ
« Եթէ քրիստոնեան իր գլխահարկը
վճարել չուզէ , կամ մի մահմէ-
տական կնիք հետ չնուիր զոր-
ծէ , կամ մի մահմէտական սպան-
նէ , կամ ձեր մարգարէին հայնոյն ,
այդ յանցանքները անոր իրաւունքնե-
րը չեն ջնջեր » : Հապա դուք ի՞նչ
իրաւունքով հայերու ամբողջ գիւ-
ղեր կաւերէք եւ հարկերնորով ու
հազարներով հիւր կը ջարդէք ,
եթէ մի հայ մի տաճիկ սպաններ է
կամ սպաննելու փորձն ըրեր է :
Սայանի է , որ դուք ձեր օրէնքը
չէք պահեր :

Իսկ եթէ ըսէք , թէ « մի հայ որ
մի տաճիկ է սպաններ կամ կառա-
վարութեան գէտ ապստամբեր է , ա-
նոր հետ բոլոր ազգն ալ յանցաւոր
է , եւ բոլոր հայ ազգն ալ յան-

ցաւոր է , եւ բոլոր հայ ազգն
ալ պատմել պէտք է » : այդ միտ-
քն ալ ձեր կրօնքին եւ շէրեթ-
ին հակառակ է : Ո՛ր ապստամբ
կամ մի տաճիկական հայու պատ-
ճառաւ , կամ նոյն իսկ եթէ այն
ապստամբը մէկը չէ այլ հարիւր եւ
հազար են , դուք ձեր օրէնքով իրա-
ւունք չունիք անեղ եւ չ'ապստամբ
մէկ հայու մը արիւնը թափելու :
Դուք , տաճիկները , եթէ կուզէք ճշ-
մարիտ միւսլիմներ ըլլալ , պար-
տական էք ձեր օրէնքը ճշգիւ կա-
տարելու : Ահա ձեր օրէնքը այս
մասին . « Եթէ մէկ պէտէ մինչու պի-
տիսն եթէ անոնցմէ մէկը (այ-
սինքն քրիստոնեաներն մէկը) տն-
հաւատարմութիւն ընելու սխի ,
պէտք է միմիայն ան սպաննուի : »
Սակայն դուք , ո՛վ Շէյխ — Իս-
լամ , հարիւր հազարներով հայերու
անեղ արիւնը կը թափէք , որոնք
ապստամբութենէ անդիկութիւն չու-
նին , կամ եթէ մի քանի հայերու
ապստամբութեանը գիտէին , բոլորո-
վին անտարբեր էին կամ նոյն իսկ
բոլորովին անհամաձայն էին :

Դուք , տաճիկները , շատ լաւ գի-
տէք , որ ձեր պաշտօնեաներուն մէջ
բարձր եւ ցած ատիժաններու վրայ
հայ պաշտօնաւորներ եւ փաշաներ
ունիք , որոնք իրենց պետութեանը
իկէ ոչ առաւել ցոյն նոյնքան հա-
ւատարմ են , որքան ամիւսհաւա-
տարիմ տաճիկները : Ուրեմն կրտիմ ,
տուէք հայերուն այն իրաւունքնե-
րը որ ձեր շէրեթը կ'ապառնէ եւ
պահանջեցէք անոնցմէ այն պարտա-
կանութիւններ որ ձեր շէրեթը կը
պահանջէ . կամ ստաւել եւս ինչ-
պէս կը պահանջէ չորովայնց թուղ-
թի ժի գլուխը : այն ատենը կը
տեսնէք թէ ո՞րքան իսլամադին
կըլլայ ձեր երկրի մէջ ո՞րքան օ-
րտա կը բերէ բոլոր ծածկաստանին :

Ա . ԱՄԻՐԱՍԽԱՆԵՄ

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

ՌԻՆԻՍՏԱՆԻ ՆԻՇԵՐ

Ո՛չ երկու օրից , ինչպէս մեր կա-
ռապան խոստացածէր , այլ երրորդ օր-
ուայ միջօրէին մօտ հասնում ենք
Թաւրիզ որ հետեւից մի լեռնակի
ստորոտի դաշտին վրայ , ձուածե-
ձգուած է անհամար ծառերից չըր-
ջապատուած , ընդարձակ եւ սիրուն
տեսքով : Վերջապէս մտնում ենք
Տարվազից (քաղաքի մեծ դուռն)
նրա փողոցները նկատում են եր-
կու կառքի նամար անանցանիկ
լինելու չափ . ապա մտնում ենք
չուկայ , չուկայ անելով Պարս-
կաստանում պէտք է իմանալ քա-
ղաքի ամբողջ անեղ արի միակ վայ-
րը , վասնզի չուկայից դուրս իսա-
նութիւնը գտնել գրիթէ անսովոր է ,
ամեն դրոժ արհեստական , անեւ-
տըրական եւն . լինում է այդ
չուկայում , որը քաղաքին համե-
մատ լինում է մեծ կամ փոքր .
վրան ծածկ , քարաշէն , նեղ ու
լայն եւ ուղիղ ու խոտոր չափը .
ներով կամ փողոցներով , որի եր-
կու կողմերը խիտ առ խիտ շին-
ուած են խանութներ , կրպակներ
եւ յարմար տեղերում էլ « քար-
վանսարայ » ներ ուր գտնուում են
աւելի մեծ տեսարանների գոր-
ծառնութեան տեղերը :

Մենք քառաձի կառքով չուկայ

մանկիւս բռնում էինք մեր կան-
քով ամբողջ ճանապարհը եւ դու-
ցադրուած առարկայի էր նմանում
մեր երեւոյթը : վասնզի ողջ շու-
կան մեզ էր նայում . ինչ որ
ծիծաղելի թուեցաւ մեզ , եւ կա-
մենում էինք կառքից ցածր գա-
լով հետեւին գնալ կառքի ետեւից .
բայց մեր կառապանը բացարձակ
ծիծաղեցաւ . մեր այս մտածման եւ
նպատակին վրայ , եւ իւր ծիծաղը
համեմեց ըսելով — թէ կարելի չէ
իրան իր «սապահներ» քաղցնել
կառքի ետեւից , համակերպեցանք
յոտաջացանք վայելելով շուկայի
ճոխ տեսքը մինչեւ հասանք մեր
օխեանները :

Թաւրիզում ենք . եւ արժէ տալ
Պարսկաստանի այդ մեծ քաղաքի
մասին մի քիչ տեղեկագրութիւն
մեր ընթերցողներին : Թաւրիզի ներ-
քին Երեւոյթը փողոցներում շատ
սխալ է . նեղ պողոտաներ եւ բար-
ձր ու ցիւրկաւոր պատեր թոյլ չեն
տալու մի ընդարձակ հորիզոն վա-
նիլի տեսողին . իսկ աների ներ-
քիւր՝ առհասարակ պոհացուցիչ է
մինչեւ ճոխ կոչուելու աստիճան .
իսկ մասնաւոր մեծ աներ եւ ապա-
րանք պակաս չեն : Տների կարա-
սիք եւ զարդարանք ընդհանրապէս
խառնուրդ են եւրոպական եւ ասիա-
կան ճաշակի . ժամիկաւոր վարպետ-
ներ , եւրոպական աթոռ ու սեղան-
ներ եւ ընտիր տեղական գորգեր
կողմում են տան կարասին . կա-
րելի է աւել , թէ ասան չկայ , որի
յոտալը ծածկուած չի լինի դորգե-
րով իսկ հարուստ աներն ի հար-
կէ աւելի ճոխ եւ ցիւրկաւ կա-
հաւորուած են մինչեւ իսկ հին
զինքերի , պատկերների եւ լուսանը-
կաների զարդանիւրով : Տների բա-
կեր ընդարձակ են եւ ստեպ պարու-
նակում են մեծ ու փոքր պար-
տէշներ ծառայով ու ծաղիկներով
զարդարուն :

Ուրեմն Թաւրիզի թաղերը ներսից
աւելի գնահատելի են քան զրտից :
Թաւրիզի հայերը բնակուում են եր-
կու թաղերում եւ գտնում են
մտաւորապէս աւելի բարձր մա-
կարդակի վրայ քան առհասարակ
Ռուսաստանի եւ ծածկաստանի ժո-
ղովուրդը : Թաւրիզի հայ երիտա-
սարգութիւնը համեմատաբար մտա-
ւորապէս գերազանցում է վերոյիշ-
եալ երկու երկրների երիտասար-
դութիւնը , իսկ բարոյապէս՝ չենք
կարող կրկնել այս համեմատութիւ-
նը : Հազուադէպ եւ գիւղարուեստի
ճաշակը նոյնպէս շատ զարգացած
է նրանց մէջ թէեւ ո՛չ բոլորովին
եւ՝ նպատակաւոր :
Ինչպէս ամեն հայաբնակ տե-
ղերում , այստեղ եւս կուտակեցա-
կան մոլութիւնը բոյն զբոժ՝ գոր-
ծում է իւր աւելը . Թաւրիզի եր-
կու թաղերի (Ղալա եւ Լիլաւա)
վարժարանները տուժում են , հե-
ծում են եւ զուր ծախում մեծ
մեծ գումարներ կուտակական պայ-
քարի տակ . մի ամբողջ տարի
կուտակեցամոլութեան շնորհիւ փակ
մնաց Լիլաւա թաղի ուսումնարա-
նը : Այս բոլոր բարեկրօնականութեան
մէջ եթէ լուռ ու մեղուաջան կեր-
պով ազգին օգտակար մի դործիչ
մարմին կայ , դա Թաւրիզի Հայուհե-
նաց Բարեգործական Միացեալ Ըն-
կերութիւնն է , որ Թաւրիզում ու-
սումնարան , մանկապարտէզ եւ աղ-
ջըկաց արհեստանոց պահելուց ջոճ՝
գիւ Ուրմում էլ պահում է շուրջ
20 երկսեռ ուսումնարաններ , եւ
այսուհանդերձ դեռ գտնում են

Թաւրիզում սեւ հոգիներ, թէեւ խիստ քիչ թւով, որ յանգրտում են ստուեր անել ջանալ այդ անհամեմատ ազնիւ ընկերութեան գործին, բայց չեն յաջողում, իսկ մեղաւորն հայտնիները փառաւորապէս յառաջ են փարում իրանց ազգաշէն գործը:

Թաւրիզեցին իւր կողմից չէ օգնում նիւթապէս կամ հազիւ է օգնում այդ պատուական ընկերութեան. միայն մի քանի յայտնի ընտանիք եւ մասնաւորապէս փարչուկեան պատ. Անդամուհիք զովելի հաստատարատութեամբ գոհում են իրանց ջանքը, հանգիստը եւ փողը եւ մասնաւոր խոր խաւարից, ինչպէս, անդլիացի, գերեմուցի եւ ասորի մարդորանից ազատելու հայ մանկութիւնը, հայութեան ապագան. տալով նրա մի միջնակարգ ուսում եւ գաւառապետութիւն՝ որչափ ներում է իրենց նիւթական կարողութիւնը: Փոքր բարեբախներ հազիւ են երեւում այդ ընկերութեան օժանդակող. միայն մի մեծամեծ Պ. Տիգրան Աֆրիկեան զբնահատելով Հայունիներ ընկերութեան նպատակն ու ջանքը. իւր սեփական ծախքով լաց է անում ընկերութեան փարչուկեան մի քանի ուսումնականներ եւ խոստանում ամեն տարի երկու երկուսն փարձարան բաց անել դարձեալ իւր ծախքով ու կատարում է իր խոստումը ամեն ճշգրտագնութեամբ: Բայց ամբողջ հայութեան միջից միայն մի Աֆրիկեան պէտք էր դուրս գալ, ուր են միւս ազգասէրները:

Մենք ուրիշ ամբիւ նորից կը վերադառնանք Թաւրիզի Հայունեաց Բրգը. Միաց. Ընկերութեան գործերին. այժմ նշանակինք կալեւութիւն ունեցող գործեր:

Ընթերցարաններ — Թաւրիզ ունի երկու ընթերցարան — գրադարան, որ կարելի է գտնել հայերէն եւ այլ լեզուներով գրքեր ու լրագրեր, որք քաղցաւամբ տեղին ու պէտքին շատ էլ անշնչան չպէտք է համարել. ինչպէս երբեմն ճանապարհորդ

պարոններ չէին գոհանում եղածով: Ունին եւ յառան, որ խոսում են շատ անգամ օգտակար նիւթերի վրայ ձեռնհաս եւ կարող անհատներ, ունենցիր յիշում են երկու տեղից էլ, տալիս են երեկոյթ, նուագահանդէս եւ ներկայացումներ վաղելով երբեմն Ն. Մ. թագաւորանոյի եւ ուրիշ մեծամեծների ներկայութիւնը եւ նիւթական ու բարոյական քաջակերութիւնը:

ԱԻԿԻ

ԱԶԳԱՅԻՆ

Ամերիկայի առաջնորդ Տ. Յովսէփ արք. Սարաճեան Պարսկաստանի առաջնորդ ընտրուել է: Տ. Մաշտոց վարդապետ այս ընտրութիւնը կատարել տալով, խնդրած է վեհ. կաթողիկոսէն որ հրամայէ Տ. Յովսէփ արք. պիսկոպոսին շուտով իր նոր վիճակը քալ, Սարաճեան Սրաղանը Ամերիկայէ հեռացնելու այս ջանքին դրդապատճառը անշուշտ քիչ օրէն պիտի յայտնուի:

— Տ. Մահակ կաթողիկոս Խապահան սկսած է Սոյ վանքին հին մասերու նորոգութեանց գործը:

— Ուստի եկեղեցւոյ Հոգաբարձութիւնը գիտած է վեհ. կաթողիկոսին խնդրելով որ Յովսէփ արք. իր առաջնորդական պաշտօնով Ամերիկայի մէջ մնայ:

— Արարիկերի առաջնորդական ընտրութեան համար Պատրիարքարանը եռանուն ցանկ մը զըրկած է, որուն մէջ առաջին տեղը կը գրաւէ Վահան վրդ. Յակոբեան: Այս վեղարարող թէեւ շատ անգամներ ցանկերու մէջ

անցած բայց երբէք առաջնորդ ընտրուելու բաղդը չէ անեցած. կը մալթենք որ այս անգամ ալ այդ բաղդին չարժանանայ: Վահան վարդապետի վերջին շահատակութիւնները պոլիսքոս հայոց մօտէն ծանօթ ըլլալով, հարկ կը դառնէ այս ամբիւ պարտք դնել աշտատահան գրտնույ Արարիկիցի ազգայնոց որ փութան իրենց ճնշողաւորի ծանօթներուն գրել, որպէս զի անոնք զուշանան Վահան վարդապետը առաջնորդ ընտրելէ: Այդ մարդը շողորդութեամբ, արծաթաէր, ստախոս, կնաւոր, փառասէր, կեղծաւոր եւ աղբային շահերը դաւաճանող մըն է, Անոր այս պանծալի յատկութիւնները հաստատեցին ու կը հաստատեն ամէն կուսակցութեան պատկանողներ ու չէզոքներ:

— Վեհեկոսի Միթարեան միարանութենէն Հ. Պողոս վրդ. Բաթթանեան մայրենի եկեղեցւոյ գիրկը վերադարձած ըլլալով, Ուստի հայ եկեղեցիին մէջ Սարաճեան արք. անոր վարդապետական վեղարարութեան հանդիսաւոր արարողութեամբ:

— Շուրջայէն հետաքրքիր մը կը խնդրէ մեզմէ հրապարակաւ հարցնել թէ, դեկտ. 26 ին տեղի ունեցած ներկայացման հասոյթը՝ որ Ազգ. Վարժարանին յատկանալի էր, որչափ եղաւ ե ուր մնաց: Կը յուսանք թէ պատ. Հոգաբարձութիւնը աւելորդ չը պիտի համարէ հետաքրքիրներուն գոհացում տալ եւ շնորհակալութիւն յայտնել այդ երկույթը սարքող երիտասարդներուն:

— Լայպցիկի (Գերմանիա) համալսարանին մէջ հայ ուսանող-

ներու թիւը այս տարի 24 ի հասած է:

— Տիգրանի մէջ անցեալ ամսուն մեռեր է հայ գորավար Ուղարանեան: Հանդուցեալը զինուորական կարեւոր պաշտօններ վարած եւ ուսուցիչութեամբ պատեալ զինի մէջ ի վարձ իւր քաջութեան ուսկի սուր ստացած էր. լայց երկու տարիէ ի վեր զինուորականութենէ քաշուած:

• Կլիկիա — «Հայրենիք»-ի մէջ կը կարդանք:

Հոսմի պոզի եւ ոտս կառավարութիւն միջոց երկար բանակցութիւններէ ետք, վերջապէս որոշուեալ է կալեւոր հայ կաթողիկոսներուն պիտի կարգել հայաճէս եկեղեցական մը, «Հայոց Առաքելական Կաթողիկոս» տիտղոսով, Սալաթի յատիկ եպիսկոպոսի իրաւասութեան տակ: Այս կարգադրութիւնը առժամեայ է, որովհետեւ թէ Հոսմի քիտոր եւ թէ ոտս կաթողիկոսութիւնը կը դառնան որ տանակ հոգաբարձու կաթողիկոս հայոց օտարաճէս եւ օտարաբնակ եպիսկոպոսի հովանաւորութեան տակ պահելը մեծ անյարմարութիւններ ունի, ուստի նկատի ունին մօտ ապագայի մէջ յատուկ հայազգի եպիսկոպոս նշանակել եւ հայ կաթողիկոսական թեմ մը հաստատել: «Հայոց Առաքելական Կաթողիկոս» պիտի ունենայ իր խորհուրդը կամ կոնսիստորիան, Ռուսաստանի միւս եպիսկոպոսներուն պէս: Հոգեւոր կոչում ընդունիլ փափաքող հայ կաթողիկոսներ պիտի կրթին «Թիֆլիզի հայ կաթողիկոսի դպրոցին» մէջ. տասնամեծարանական ուսումներու համար պիտի մտնեն Թիբասպոլի կղերանոց, միջին որ բաւական թիւով հայ սպանդաններ առաջ գան, անոնց համար յատուկ հայ կղերանոց բանակու համար:

Ռուսաստանի մէջ կը կար հայ. եւ ի հայ կաթողիկոսութեան թիւը կը հասնի 50,000 հոգու, 64 եկեղեցիով

ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐՆԱՆ

8

ԿԱՐՄԻՐ ԺԱՄՈՒՑ

(Շար. նախարդ թիւէն)

Վարժապետներուն մէկուն՝ Արշալին՝ մասնաւոր համակրանքը կը զգար: Օր մը երբ մեկտեղ կ'երթային, անիկայ արմուկովը Գաբրիէլը մշտն, քովերնուն ճիւղապէս մարդ մը անցած տան:

— Ձեր գեղը ծեծ կերած մարդը աս է, ըսաւ:

— Բո՛ւթը. հարցուց դողալով:

— Նոյն ինքն, պատառնանց վարժապետը ծիծաղելով: Արշալին Պոլսեցի էր ու ազատամիտ բայց պաշտօնը զինք խոհեմութեան կը պարտաւորէր: Գաբրիէլը քաղքէն չըլլալուն՝ վարժապետը կը համարձակէր իր փոխը բոլորովին չի գալի, ու նաեւ քանի մը ալ խօսք ըսել:

— Մարդուն գրքերն ալ այրիք են եղեր, աւելցուց հեղինակէն:

— Այո՛, բո՛ւթի գրքեր են, էրեք են:

— Է, բո՛ւթի գրքեր ինչ է, գիտե՞ս:

— Բո՛ւթի գրքեր բո՛ւթի գրք է, ինչ պիտի ըլլայ որ: Կարգացող զօրիք կ'երթայ:

Այս զեղջիկական պարզամտութիւնը շատ գոհարճացուց Պոլսեցի «միւսին», որ բո՛ւթի գրքերէն այլապէս տարբեր ընթերցանութիւններով պարագայէն էր, առանց զեպի գծովք ուղեւորութեան մը երկեղին:

— Աս բո՛ւթի գրքը ըսածին Աստուածաշունչ է, ըսաւ ընկերոջը:

Տղուն չուէր բռնուեցաւ. «Աստուածաշունչ» անունը լսելուն: Անոյս կորսուած սրելի մը հետքը կարծես մէկէնմէկ գտած ըլլաւ: Բայց միտքը կը մթազնէր եւր վարժապետը «Աստուածաշունչ» ու «բո՛ւթ» բառերը իրարու կը կցէր: Հրեշտակն ու սատանան մէկ կրնան ըլլալ:

— Բո՛ւթները Աստուածաշունչ կ'ունենան, հարցուց չուարած:

Վարժապետը խնդաց:

— Ինչու չունենան: Ինչո՞ք ալ քրիստոնեայ չեն մի, ըսաւ:

— Իրիստոնեայ մի: Վարժապետ, վրաս կը խնդան: Պո՛ւթ ու ծո՛ւ չընտրող ընտր քրիստոնեայ կ'ըլլայ, ընդմիտքս քիտոր:

Արշալին չուէր աւելի առաջ երթալով խեղճ տղան բոլորովին պիտի չկրնար գոյրակցել: Գիտէր որ գեղացի միամիտը մէկէնմէկ իր գաղափարներէն բան մը հանկաւ, առանց նախապատրաստութեան:

Ու գուցէ զուրք շատախօսութեամբ իր զըրկուն փորձանք մըն ալ բերէր: Խօսակցութեան

նիւթը փոխել ուզեց, բայց Գաբրիէլին միտքն ալ խռովեալ էր: Անշուշտ վարժապետը վրան կը խնդար «բո՛ւթները Աստուածաշունչ ունին» բախով: Բայց տէրտէ՛րն ինչու զինքը պատժած էր: Այո՛, անոր ձեռքերը Աստուածաշունչն էր. դա՛ն քիչ մը կարգաւորն համար էր, որ ապտակ կերած էր: Ինչու: Եւ ինչո՞ւ տէր Թաղէոս այդ Աստուածաշունչը երբէք իր ձեռքը տալ չէր ուզած: Ինչո՞ւ, ինչ կար: Խեղճ տղուն ուղեղը խելոտ լըով լեցում էր. պիտի ճայթէր: Ա՛յ չգիտացաւ:

— Արշալին էֆէնդի, աստ Աստուածաշունչէն հատ մը ինծի կրնաս ճարել, խնդրեց:

Վարժապետը տղուն երեսը նայեցաւ ու զգիր ջէ՛, անիկայ իրեն խաղ մը պիտի չխաղար:

— Ինծի երթանք ըստ: Անխօսեկ քալելով մինչեւ վարժապետին տունը գացին:

Սենեակին դուռը կը պնէ յետոյ, վարժապետը անտուկը բացաւ: Զերմակեղծները դուրս հանեց. անոնց տակէն թուր զինքն ու զրքերը: Խորը, լաթերու մէջ պլլուած, կլորիկ գոտիկ գիրքը, որուն սեփ ու սեւ կողքին վրայ ոսկեղէն տառերը կը փայլէին, Գաբրիէլը զոգըրդալով ձեռք ատաւ աս գիրքը: Բայց ուսուցիչը: Եւ ինչ որ տէրտէրն լըով տեսած էր:

(Շարունակելի)

печатица — "Взаимность", Варна